

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Մեծանուն լեզվաբան-հայագետ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի (1876—1953) նամակների զգալի մասը պահվում է Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի անհատական ֆոնդերում:

Հ. Աճառյանի ստորև հրապարակվող նամակները, գրված 1933—1937 թթ., ուղղված են նյույորքյան Բանասեր ու լեզվաբան, թարգմանիչ Միհրդատ Թիրյաբյանին և շոշափում են լեզվական, հայագիտական, հնագիտական և հրատարակչական հարցեր: Նամակներում կան նաև տեղեկություններ Հր. Աճառյանի ստեղծագործական մտահղացումների, ինչպես նաև Հայաստանում հայագիտության զարգացման և այդ ուղղությամբ լույս տեսնող գրականության մասին: Հ. Աճառյանի՝ Մ. Թիրյաբյանին ուղղված նամակները հրապարակում ենք որոշ կրճատումներով:

Ա. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

1

3 նոյեմբերի, 1933,
Երևան

Բառարանիս հառաջաբանը¹ ձիշտ Ձեր ուղած ձևով (80 էջ) արդեն պատ-
րաստ է. պիտի լույս տեսնե հավելվածին հետ, որ թերևս եկող տարվան վեր-
ջերը պատրաստ ըլլա (500 էջ): Սուտ ստուգարանությանց հավաքման համար
ալ առաջաբանիս մեջ խոսք պիտի ըլլա. հոն կկարդաք պատճառաբանություն-
ներս: Սկզբունք է. ես այսպես էի ծրարած. ուրիշ մը կրնար տարբեր ձևով
ծրարել: Կոչնակ և այլ ամեն թերթ, որ կուղարկվի հանրային գրադարանի
հասցեով, ապահով տեղ կհասնի և կպահվի: Կրնան պատահական կորուստ-
ներ տեղի ունենալ, բայց ոչ միշտ: Ֆուխա² բառի մասին Ձեր սոված ստուգա-
բանությունը անցուցի հավելվածիս մեջ՝ Ձեր անունով: Շնորհակալ եմ: Նման
բառեր եթե գտնեք, խնդրեմ մի ղլանաք հայտնել: —Արմատական բառա-
րանիս մասին եվրոպական լեզվով քննադատությունները կհիշեմ Meillet
հուլիս գովասանական գրվածները Rev. des études arméniennes, 1926, № 6,
էջ 333—5, Bulletin de la so. de ling. de Paris, № 82, էջ 49—51, որ
կըսե. „Pour aucune langue, on n'a un dictionnaire étymologique aussi
ample, aussi complet. Je suis fier d'avoir eu autrefois M. Adjarean au
nombre de mes élèves pendant de longues années: il est de ceux qui
font honneur à l'école par où ils ont passé“:

2

15 մայիսի, 1934,
Երևան

Ստացած եմ Ձեզմե 9 ապրիլ և 14 մարտ թվականի նամակները, բայց չեմ ստացած 2/27 նամակը, որ հիշած եք Ձեր պրոբյան մեջ: Ես խնդրած էի Ձեզմե հասցե մը տալ Եվրոպա, որպեսզի անոր միջոցով ղրկեի գրքերը: Պատասխանը շատ ուշացավ, և եկած նամակներուն մեջ ալ հասցե չկար: ...Որոշեցի սովորական ձևով ուղարկել, ինչպես ուղարկած էի Ա և Զ հատորները:

Ձեր վերջին խոսքերը, որով փափաք կհայտնեիք մեզ մոտ՝ ըլլալ և մեր բնկերությունը վայելել, խորապէս հուզեցին ինձ: Կհավատում որ ատիկա մէր բոլոր բանիմաց հայրենակիցներու ալ փափաքն է: Երևանը հիմա մլուգե մըն է, աճեն տեսակ հայեր՝ սկսյալ սպահանցիներէ մինչև Պոլիս, Ռոդոսիո, Փարիզ, Լոնդոն և Ամերիկա, բնինք հոս: Աշխատողի համար անհուն նյութ կա լեզվական, նազդիտական, պատմական, ազգադրական և այլ և այլն: Այս տարի կլիման ալ սքանչելի կերթա, ձմեռը շատ ցուրտ չէր, գարունը երկար եղավ և դեռ ամառվան կիզիչ աաքերը հեռու են. աշուն արդեն սքանչելի է: Եթե ոչ իմ հրավերը, գոնե բնության ձայնը չպիտի ուզեիք լսել դուք ալ և ուրիշ շատերու նման ճամբորդություն մը ելլեիք դեպի այս կողմ: Իմ կողմես պատրաստ պիտի գտնեք ամեն հյուրընկալություն. մեծ ու լուսավոր սենյակ մը ունիմ մեծ փողոցի վրա, անիկա Ձեր տրամադրության տակ կղնեմ ամբողջապես:

3

3 հուլիսի, 1934,
Երևան

Այն բոլոր նամակներուն, որ ստացած եմ Ձեզմե, ժամանակին պատասխանած եմ: Կցավիմ, որ ճամբան կորսված է մայիսի 15-ին գրած նամակս, որ հրավեր կկարգայի Ձեզ այցելելու այս ամառ Երևան, գոնե ամռան մը համար, առաջարկելով միեւնոյն ժամանակ, որ եթե նյութական կարեւորության մեջ եք, ճամբու ծախքի համար Ձեզի փոխանցեցի 65 դոլլարի գումար մը, որ պահանջ ունիմ Ամերիկա:

Ստացա այս անգամ 4 հունիս Ձեր գրությունը, որ 20 օրեն հասեր էր: Բառարանին բոլոր սրահները ղրկած եմ Ձեզ և անհամբեր կսպասեմ Ձեր պատասխանին: Գրեցեք ինձ, թե բոլորը անթերի ստացա՞ք (առո՞ք համար կխնդրեմ, որ էջերը ծայրէ ի ծայր հաշվեք):

Գրամեքենան 20Կ-ը խոստացավ վերջին անգամ՝ անշուշտ ուղարկելու. հույսս անոր վրա է և եթե այս անգամ ալ ի պերե ելլեմ, այն տաեմ միայն Ձեզի ձանձրութիւն տալ պիտի համարձակիմ:

Ֆիրդուսիի համար դիմեցի կուլտուրայի պատմության ինստիտուտին, որ պիտի հրատարակէ հատուկ ժողովածու մը Ֆիրդուսիի հաղարամյակին առթիվ: Նիրով պիտի հրատարակեն Ձեր թարգմանությունը (200 տող.), եթե ուղարկեք: Բայց հրատարակությունը, որ արդեն սկսած է, պիտի վերջանա

օգոստոսի վերջը: Եթե մինչև այն ժամանակ Ձեր թարգմանությունը հասնի, պիտի լինեն գրքին վերջը: Իսկ եթե չկրցաք հասցնել, ուրիշ որևէ գրական հանդեսի մը մեջ շատ դյուրին է հրատարակել: Սիրով կընդունին:

Ես Երևանեն պիտի մեկնիմ օգոստոսի 1-ին. իրիմ պիտի երթամ ոտքս բուժելու. բուժարան պիտի հասնիմ օգոստոսի 9-ին և պիտի մեկնիմ անկե անպտեմբերի 3-ին. ուրեմն սեպտեմբերի 15-ին անշուշտ Երևան կըլլամ: Դուք Ձեր համակները ըստ այնմ գրեցեք: Գալով Ֆիրդուսիի թարգմանության, ոչովհետև ես չպիտի ըլլամ Երևան, ուղարկեցեք հետևյալ հասցեով.

Ընկ. Հակոբ Զորյանին¹, Կուլտուրայի Պատմության ինստիտուտ, Կուլտուրայի տուն, Սվերդլով փողոց:

4

8 դեկտ., 1934.
Երևան

Ստացա Ձեր 23 հոկտ. և 14 նոյեմբերի համակները: Շնորհակալ եմ Ձեզ՝ Ձեր հետաքրքրության համար իմ առողջական վիճակիս մասին: Կրթեն թե այս հիվանդությունը շուտ անցնող տեսակներէն չէ. տարիներ կբաշե՝ հետզհետէ պակսելով և թուլանալով: Ես ալ հիմա գրեթե անտարբեր եմ, որովհետև ինձ չի խանգարեք. միայն քիչ մը կկաղամ և բայած ատենս ալ քիչ մը ցավ կզգամ: Բայց ընդհանուր վիճակիս վրա բնավ ազդեցություն չունի և աշխատելու գրեթե արգելք չի հանդիսանար:

Բառարանիս 7-րդ հատորը՝ սկսած էն տպել. այս անգամ տպարանով տպել. կպարունակե հառաջաբան մը՝ ընդարձակ, ինչպէս թելադրած էիք, համառոտագրությանց ցանկ և հավելում: 2—300 երեսանոց բան մը պիտի ըլլա. և կող տարի կվերջանա. և հատ մը Ձեզի կղրկեմ:

Ֆիրդուսիեն երկու գիրք հրատարակվեցավ՝ ժողովածու մը և Զոհրապի վեպը². ամեն մեկը 5000 օրինակ. 7 օրվա մեջ բոլորը ծախվեցան և ամենևին օրինակ մը չմնաց: Հիմա նորեն պիտի տպեն 20.000 օրինակ: Ես պիտի աշխատիմ ասոր անոր դիմելով հին օրինակ մը գտնել երկուքեն և ղրկել Ձեզի՝ իբրև նվեր:

Ձեզի նոր տեղեկություն մ'ալ սամ: Պետական հրատարակչությունը տեսնելով, որ Ֆիրդուսին շատ լավ ծախվեցավ, ձեռնարկեց թարգմանել և հրատարակել ամբողջ Ֆիրդուսին՝ ծայրե ի ծայր: Գործը հանձնվեցավ Գևորգ Ասատուրին, որ պատվական մարդ մ'է և լավ թարգմանիչ: Ընդունեց առաջարկը և 10 տարիեն գործը պիտի վերջացնէ: Այս տեղեկությունը կաբժեմ մեծապես կշահագրգռե Ձեզի:

5

31 մարտ, 1935.
Երևան

Հայոց լեզվի պատմություն¹ Արմատական բառարանիս եղրակացությունն է. դուրընթեռնելի և լայն հասարակության մատչելի գործ մը տված ըլլալ կկարծեմ: Շուտով պիտի սկսենք տպագրություն: Հիմա ձեռքիս տակ երկու գործ ունիմ. մեկը Ազուլեցոց բարբառի քննությունը², որ մեկ-երկու

օրենն (ապրիլի 2-ին) կվերջանա և մեկ ալ Արմատակոնիս է հատորը, որուն և կեսը արդեն տպված վերջացած է: Ամբողջին լրանալեն հետո միայն կարելի պիտի ըլլա ձեռնարկել Հայ. լեզ. պատմ. հրատարակութեան:

Փետր. 22 թվականով ղրկած էի Ֆիրդուսիի վեպը³. հուլիսունիմ որ մինչև հիմա ստացած կըլլաք: Գևորգ Ասատուր⁴ (առաջ կկոչվեր Գևորգ Տեր-Աստվածաբարյան) բնիկ թիֆլիսեցի է. ծն. 1868 թ. իր բարձրագոյն կրթութեանը ստացած է Բետրապուրկի Արեւելյան ակադեմիայի մեջ, աշակերտելով ժողովակիի, Պոկասանովի և Նասրուլլահի Խան Նուրիի:

Մեր համալսարանի վրացերենի դասախոսն էր. հիմա ծերութեան պատճառով հանգստեան թողակի կանչված: Մասնագետ է վրացերենի և Արեւելյան ազգաց դրականութեան պատմութեան: Իրեն հանձնվեցավ վրացի բանաստեղծ Ռուսթավելիի Հնձենավեր պոեմայի թարգմանութեանը⁵: Ավելի սիրով հանձն առավ: Բայց այս հանձնառութեամբ ետ քաշվեցավ առայժմ Ֆիրդուսին թարգմանելու գործեն: Ձեր թեւադրանքը հայտնեցի իրեն 11 ոտնյա չափի մասին, դտավ որ մեր աշանջին լավ չի հնչեր այդ չափը: Ամեն մարդ իր ճաշակն ունի:

6

20 դեկտեմբերի, 1935,
Երևան

Ս.Մանուր դարձյալ իրիմ դացած էինք բուժվելու համար. անկե սկսանք ճամփորդել իրիմի գանազան քաղաքները (Սիմֆերոպոլ, Պաղչեսարայ, Սևաստապոլ, Պալաքլավա). նշանավոր վայրեր, ուր տեղի ունեցած են մեծամեծ պատերազմներ տաճկաց և ռուսաց միջև: Տեսանք իրիմի խաներու հռչակավոր պալատը (տնշուք բան), որ իր ամբողջութեամբ իբրև մշուղե մը կպահվի ցարդ այցելուներու տրամադրութեան: Գացինք տեսանք Զուֆուտ Կսիւն կոչված բերդաքաղաքը, որ Անիի նման ամրակառույց գծով արեւելանելի միջնաբերդ-բերդաքաղաք մ'է լեռներու խորը թաղված, ժայռերու վրա թառած: Վերջապէս եկանք Օդեսա, ուրկէ ցամաքի ճամբով վերադարձանք մեր սիրելի Էրևանը:

Հոկտեմբերի 16-ին ղրկեցի Ձեզ մեկ-մեկ օրինակ Արմատական բառարանի է հատորը և Ադուլիսի բարբառը¹: Արդյոք հաւա՞ն Ձեր ձեռքը: Ասկէ առաջ ալ ղրկած էի բարբառագիտութեան և թուրքերենի փոխ. բառերը²: Խնդրեմ եթէ ժամանակ ունենաք, ասոնց ստացման մասին պիտեք ինձ:

Սկսանք հրատարակել նոր աշխատութեան մ'ալ (Նոր Զուգայի բարբառի քննութեանը)³, երբ վերջանա, պատիվ պիտի ունենամ ղրկելու օրինակ մը Ձեզ:

7

3 մարտ, 1936,
Երևան

Ստացա Ձեր 20 հունվար թվակիրը. Այսօր ալ Հերյանեն պատաւիւան, որով կհայտնէ թէ հեռախոսեր եք իրեն՝ և առաջարկեր եք իմացնել ինձ գրութեան ստացումը: Շնորհակալ եմ Ձեր աշխատութեան համար: է հատորիս մեջ մի քանի տեղ Ձեր անունն էլ է հիշված (համտ. սորակալ և ֆուխա):

Հայ լեզվի պատմության հրատարակության իրավունքը երեկ մաճառեցի մեր համալսարանին 10.000 ռուբլիով: Պիտի տպեն 1000 օրինակ. պայմանագրով դրին մինչև 1936 դեկտ. 31, բայց ես հազիվ թե կարենամ մինչև այն օրը լրացնել: Տպագրությունը պիտի կատարենք մաս-մաս. արդեն տվեր եմ առաջին մամուլը:

Մալխասյանի բառարանը¹ ամբողջապես պատրաստ է. շուտով պիտի ձևակերպեն տպագրության:

Նամակիս կրկնեցանք կապոց մը, ուր պիտի գտնեք 1. Խորենացու առեղծվածի լուծումը², 2. Խալդերենի բանալին³, 3. զույգ նկար, որոնք պիտի ներմուծվին Արմ. բառ. է-րդ հատորի վերջը, 4. Մանանդյանի կշիռներ և չափեր⁴:

Խալդերենի բանալին կարդալով ամբողջապես պիտի ճանոթանաք վերլուծման խնդրին, իր թերություններով հանդերձ, որոնց վրա դժբախտաբար աչք գոցելու է, ըստ որում քննիչը լեզվաբան չէ, այլ գյուղատնտես: Բայց այս թերությունները մնաս չեն տար ընդհանուր եզրակացության և աշխատության բուն նպատակին, որ է լուծել խալդերենը ուտիերենով: Հեղինակը ամեն իրավունք կուտա Ձեզ գրելու ուր որ ուզեք և ինչ որ ուզեք համաձայն գրքի ցուցումներուն:

Նկարներեն մեկ զույգը կինգրեի որ հաճեիք հասցնել Հերյանին:

Հիմա Ձեզմե ծանր խնդիր մը ունիմ:

Ձեռնարկած եմ կազմելու ընդհանուր քերականություն մը⁵, որ միանգամայն հայերենի համեմատական քերականությունը պիտի ըլլա՝ իր բոլոր բարբառներով միասին: Ծրարիւրը քիչ մը տարօրինակ է: Որեւէ քերականական երևույթ կքննեմ հետևյալ ձևով. նախ ընդհանրապես աշխարհիս բոլոր լեզուներուն մեջ, հետո հնդեվրոպական լեզվախմբին մեջ, հետո կմասնավորեմ խոսքը գրաբարի վրա, կանցնիմ միջին հայերենին, հետո աշխարհաբարին՝ իր բոլոր բարբառներով: Ամբողջը կենթադրեմ 8000 էջ, որուն կեսը գրած եմ արդեն: Նկատի առած եմ առայժմ 85 լեզու, որոնց մեջ են ճաբոներեն, չինարեն, աննամերեն, հոլանդերեն, սլավոնիկ, հինդուստանի, շուվաշերեն, ջուվաշերեն և այլն, և այլն: Այս բոլոր լեզուներու քերականությունը կարգացած եմ: Ամերիկյան լեզուներեն ունեմ միայն Կարրիեր կոչված լեզուն (Morice The Carrier language, Աթապասկ, անգլիական, Կոլումբիա, շատ մանրուկրկիտ գործ մը). բայց պեսք ունիմ կառգալու դեռ շատ ուրիշ լեզուներու քերականություններ, որոնք ձեռք բերել շատ դժվար է: Կարող էիք արդյոք օգնել ինձի այս գործիս մեջ: Ձեր օգնությունը ինչքան ալ փոքր ըլլա՝ շնորհակալությամբ ընդունելի է ինձ: Ամերիկայի մեջ 400 վայրենի լեզու կա. որ մեկին հասնիմ. կա նույնիսկ Նյու-Յորքին մեջ առանձին ընկերություն մը նույն վայրենիներու լեզուները քննելու և շատ մը գրքեր հրատարակած է: Կապ ունի՞ք այս ընկերության և կամ անոր որեւէ մեկ անդամին հետ: Ի՞նչ միջոց կարելի է գտնել զանազան վայրենիներու լեզուներու վրա մեյ մեկ բերականություն ձեռք բերելու և կարգալու համար: Ինձի չեն հետաքրքրեր այդ լեզուներու ծագումը, բառերու ստուգաբանությունը, իրարու հետ համեմատությունը, այլ միայն և միայն նկարագրական քերականությունը. որ կարգալե հետո հանձն կառնիմ ետ դարձնել անվթար: Այս մասին կխնդրեմ, որ իմ խնդրու աչքաթող չընեք...

25 հունիսի, 1936,
Երևան

Կուստասխանեմ Ձեր 5 մայիսի և 1 հունիսի թվակիրներուն:

Չափազանց մեծ ուրախություն զգացի, երբ ստացա Ձեր ուղարկած զիրքը. 10 լեզվի քերականության մասին: Ես մինչև հիմա կազմած եմ 87 լեզվի քերականություն (հայերենը, ֆրանսերեն ու յաթիններենը չհաշված): ավելի-ցրնելով 10, պիտի ըլլա 97, որ հարյուրեն հեռու չէ:

Մեծապես շնորհակալ եմ Ձեր այդ թանկագին նվերին համար, ի փոխարենն ևս ալ կխոստանամ նվիրելու Ձեզ իմ բոլոր տպած դրքերս այսուհետե: Այնուամենայնիվ ստույգ է. որ Ամերիկյան Ընկերություն մը կա վայրենիներու լեզվի քննու է, որու հասցեն հրաձգեմ անցնի կուղարկեմ: Գիրքը ճիշտ ուղածիս պէս է. նկարագրական քերականություն և ոչ ավելին: Յուրաքանչյուրը հնոյթ, որ տարօրինակ է մեր լեզվի և ընդհանրապես լեզվի համար, առանձին առանձին պիտի առնեմ և տեղավորեմ իր պատշաճ տեղը: Ընթերցումը շատ երկար պիտի տևե, մանավանդ որ հիմա զբաղված եմ հայոց լեզվի պատմության¹ հրատարակությամբ, որուն առաջին զուգահեռները նորեն և ավելի ընդարձակ պրել հարկ եղավ: Ասկէ դատ կհրատարակեմ զրաբարի նորոգուց քերականություն մը² (դասագիրք համալսարանի Ա. կուրսի համար) և զրաբարի փոքր ծաղկաքաղ մը՝ կազմված նոր պահանջներու համաձայն. այն է աշխարհիկ և ոչ կրոնական բովանդակությամբ, և տմեն մեկ հեղինակեմ մեկ ընտրելագույն հատված դնելու պայմանով:

Մախասյան բառարանը դեռ չէ սկսած տպել. շուտով կսկսի: Կհրատարակվի նաև հայերեն Հանրագիտակ³ բառարան մը, որուն Ա. հատորեն 480 էրես արդեն տպված է: Երբ վերջանա, կուզեմ օրինակ մը դրեմ Ձեզ: Ընդունեցե՛ք Փ. Թերլեմեզյանի⁴ փոխադարձ սիրալիր բարևները:

Գևորգ Ասատուրը կաթված ստացավ. առ ամենաբարի, ամենասիրելի պատվական մարդը զրեթե անընդունակ դարձավ աշխատանքի. այսպիսով Ֆիրդուսին մնաց. իսկ Ընձենավորը կամաց կամաց կշտրունակե:

...նախտերենի մասին կուզեմ խոսել. ճիշտ է ձեր կարծիքը թե ամեն ինչ կարդացված է և տուգաբանությամբ, բայց ամեն ինչ հասկացված չէ. ասոր համար է, որ մեկն այսպես կը արգամանե, մյուսն այնպես: Այդ մասին սակայն այսպես ընդարձակ խոսված է «Հայոց լեզվի պատմություն» մեջ, ու նախորդի քիչ մ'ալ սպասել և հոն կարդալով Ձեր կարծիքը հայտնել: Ինձի բոլոր թե հրամայված է մեկ ամսվա մեջ տպել վերջացնել. այսքան շուտ ես չեմ կրնար հասնիլ, բայց այնուամենայնիվ երկար չի բաշեր և ցիրքս կատանաք:

8 սեպտեմբեր, 1936,
Երևան

Թովմաս Մկրտչյանի հրատարակած Արձանագրությունը «Մշակի» մեջ⁵ նորություն մը չէ: Ժիշտ եք պրած թե այդ արձանագրությունը շինծու բան է. Այդ արձանագրությունը, որ գտնված է Մերտինի (Մամուլտո) Ս. Գևորգ եկե-

դեցվույն պատին վրա, հրատարակած է նախ Հանդես Ամսօրիայի մեջ 1905 թ. էջ 65—67, հանդերձ քննությամբ Հ. Տաշյանի¹, նույն մասին ես ալ խոսած եմ իմ «Հայոց գրերը» աշխատությանս մեջ, տպ. Վիեննա, էջ 128: Արձանագրություն ընթերցումը ճիշտ է՝ հակառակ շարված հայերեն տառերով: Բայց ճիշտ չէ բնավ այն միտքը թե նա հին հայ արձանագրություն է՝ 450 թվեն, նախքան հայ գրերու գյուտը: Արձանագրությունը կեղծիք մ'է 1707—16 թվին կատարված, որուն ասպարույց են տառադարձական սխալները. հուլերենի ա գիրը երեք անգամ ասորերեն տառադարձված է ձ (որ է դ), հայերեն յ գիրը երկու անգամ տառադարձված է ասորի հ (ի) տառով. ասոնք կը ցուցնեն որ արձանագրողը (կեղծողը) արևմտահայ մ'է ու ժամանակե, երբ հյ. տ. դարձած էր ձ և յ դարձած էր հ: Հայերեն այբուբենն ոչ թե առաջ, այլ անկե հետո ըլլալու ուրիշ ասպարույց է այն, որ 3 անգամ հյ. ու երկտառ ձայնավորը զրկած է ասորերենն ա: Վերջապես 450 ն՞մ թվականը կենթադրե, որ հայ այբուբենը արդեն շինված ու շարված էր, և այդ այբուբենին մեջ ն և ծ տառերը իրենց արդի տեղերն ունեին, որպեսզի 400 և 50 նշանակեին: Նման կեղծիքներ հաճախ եղած են մեր մեջ աղգային սեփականությունները հափշտակող ձեռքերն ազատելու բարի նպատակով:

Ամերիկյան 10 լեղվի քերականությունը վերջացուցի. մեծապես օգտակար եղավ ինձ, մանավանդ էսքիմոսերեն քերականությունը, որուն շատ կկարուտեի: Եթե առիթ ունենաք ձեռք ձգելու Մալայան-Պոլինեզյան և Ովկիանյան (Ավստրալիա) լեզուներու վրա նմանօրինակ աշխատություն մը, նույնիսկ կարդալե հետո ետ դրկելու պայմանով, չափազանց շնորհակալ պիտի ըլլամ...

10

24 հունիս. 1937,
Երևան

Ձեր փափաքին համաձայն գեեցի Ձեր առաջարկած 3 գրքերը, որոնք սեղանիս վրա դրած կսպասեն փոստ հանձնելու: Դիմել եմ ուր որ անկ է՝ կարևոր թույլտվությունը ստանալու համար: Թեև բավական ուշացավ, բայց հույս ունեմ վերջապես հասցնելու Ձեզ:

Այս տարի քանի մը հանձնարարություններ ստացա մեր ինստիտուտներեն, որ կկարծեմ թե հաջողությամբ պիտի կրնամ ի գլուխ հանել: Ասոնք են՝

1. Հայոց լեզվի պատմություն¹.

2. Ընդհանուր լեզվաբանության ներածություն².

3. Ձայնաբանություն³.

4. Ստուգանքի թարգմանությունը հունարենե հայերեն⁴.

5. Պատկեր հայ մատենագրության սկզբեն մինչև ԺԸ դար⁵:

Առաջինը արդեն Երուսաղեմ մրցանակ ստացած աշխատությունն է, որ հույս ունեմ այս հուլիսի սկզբին տպագրության տալ: Անոր պիտի հետևին երկրորդը և երրորդը: Չորրորդը բոլորովին պատրաստ է. կսպասենք միայն հունարեն տառերու՝ որ հանձնարարած ենք արդեն. ըստ որում հայերեն թարգմանության դեմ պիտի տրվի նաև հունարեն բնագիրը: Արձանագրությանց⁶ ժողովածուն փառավոր գործ մը պիտի ըլլա, մեծ մասամբ լուսանկարներով, որուն վրա կաշխատակցինք 4 հոգի: Իսկ վերջինը հատընտիր մըն է, որ պիտի պարունակե հատվածներ բոլոր հեղինակներե անխտիր, հանդերձ ծանոթագրություններով:

Հրատարակեցի նաև մեր համալսարանի ուսանողներու գործընթացի վրա համար «Պարսկական հատրնտիր»⁷ մը, որ նույնպէս պիտի ուղարկեմ Ձեզ՝ մյուս 3 գրքերու հետ, երբ արտոնագիրն ստանամ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1. Խոսքը «Հայերեն արմատական բառարանի» է հատորի առաջաբանի մասին է:
2. Տե՛ս Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» 7-րդ հատորը (էջ 192):

2

1. Միջրդատ Թիրյաքյանը Հայաստան է եկել որդու հետ 1936 թ.:

3

1. Զորյան Հակոբ (1894—1942) — պատմաբան: Սովորել է Լոզանի և Բեռլինի համալսարաններում: 1925 թ. աշխատել է Երևանի պետական համալսարանում, դասախոսել է հայ ժողովրդի պատմության: Ունի տպագրւած մի շարք աշխատություններ:

4

1. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» 7-րդ հատորը լույս տեսավ Երևանում, Մելրոնյան ֆոնդի հրատարակությամբ (1935 թ. 209 էջ):
2. Ֆիրդուսու ծննդյան հաղարարակի առթիվ Հայաստանի պետական հրատարակչությունը 1934 թ. լույս ընծայեց «Ֆիրդուսի» և «Ռոստամ և Զոհրաբ» վեպը:

5

1. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության Ա հատորը լույս է տեսել Երևանում, պետհամալսարանի հրատարակությամբ, 1940 թ., 354 էջ:
2. «Ազդուեցոց բարբառի քննությունը» տպագրվել է 1935 թ. Երևանում:
3. Խոսքը Ֆիրդուսու «Շահ-Նամե» վեպի «Ռոստամ և Զոհրաբ» հատվածի հայերեն թարգմանության մասին է, որը կատարել է Դևորգ Ասատուրը, նկարազարդել է Մարտիրոս Սարյանը: Տպագրվել է 1934 թ. Երևանում:
4. Արատուր Դևորգ (1868—1937) — դրականագետ, թարգմանիչ, արևելագետ մանկավարժ: 1921 թ. աշխատել է Երևանի պետական համալսարանում որպես վրաց լեզվի և արևելյան ժողովուրդների գրականության դասախոս և միաժամանակ ղրաղվել է թարգմանությամբ: 1931 թ. պարսկերենից թարգմանել է Ֆիրդուսու «Շահ-Նամեից» «Բեժան և Մանիժա» հատվածը, որը տպագրվել է 1934 թ. «Նորք» գրական հանդեսում:
5. Հայաստանի պետական հրատարակչությունը 1936 թ. լույս ընծայեց այդ պոեմի ամբողջական թարգմանությունը՝ «Վաղբենավոր» խորագրով, Իրակլի Թոփձեի նկարազարդումներով:

6

1. Աճառյանի «Քննություն Ագուլիսի բարբառի» գիրքը լույս է տեսել համալսարանի հրատարակությամբ, 1935-ին (ապակետիպ), այնուհետև նույն թվականին՝ Պետհրատի կողմից, 400 էջ:

2. Աճառյանի «Թուրքերենե փոխառյալ բառերը հայերենի մեջ» աշխատությունը տպագրվել է էմինյան ազգագրական ժողովածուի մատենաշարով, հատ. Գ, 1902 թ., Մոսկվա—Վաղարշապատ, 381 էջ:

3. Աճառյանի «Քննություն նոր Զուղայի բարբառի» աշխատությունը լույս է տեսել համալսարանի հրատարակությամբ, 1940 թ. (ապակետիպ), 401 էջ:

7

1. Մալխասյանի «Հայերեն բացատրական բառարանը» (4 հատոր) լույս է տեսել ՀՍՍՀ Պետական հրատարակչության կողմից, արժանացել է պետական մրցանակի:

2. Հ. Մանանդյանի «Խորենացու առեղծվածի լուծումը» գիրքը, որը տպագրվել է 1934 թ., 230 էջ:

3. Խոսքը բանասեր Պայազատ Աբգարի «Նալդերեն լեզվի բանալին» դրքի մասին է, որի առաջաբանը՝ «Կարծիք իմ» խորագրով, գրել է Աճառյանը: Տպագրվել է 1935 թ. Երևանում:

4. Հ. Մանանդյանի «Կշիռներ և շափեր հնագույն հայ աղբյուրներում» աշխատությունը տպագրվել է Մելքոնյանի ֆոնդի կողմից, Երևան, 1936 թ. 139 էջ:

5. Խոսքը վերաբերում է «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» աշխատությանը, որը Ս հատորով լույս տեսավ ՀՍՍՀ ԳԱ հրատարակությամբ՝ 1952—1971 թթ.:

8

1. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» (երկու հատորով) աշխատությունը պետական համալսարանի հրատարակությամբ լույս է տեսել առաջին հատորը 1940, 356 էջ, երկրորդը՝ 1951 թ. 638 էջ:

2. Գրաբարի «Նոր ուսույցը» Երևանի համալսարանի հրատարակությամբ լույս տեսավ 1935-ին (ապակետիպ), նույնը Պետհրատի կողմից՝ 1936-ին:

3. 1935 թ. Հայաստանի խորհրդայնացման 12-րդ ապրիլի առթիվ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն «Հայկական խորհրդային հանրագիտարան» ստեղծելու մասին հատուկ որոշում ընդունեց: 1935 թ. տպագրվեց, բայց լույս չտեսավ այդ հանրագիտարանի փորձնական պրակը:

4. Փանոս Թերլեմեզյանը (1867—1941)—հայ անվանի նկարիչ, Աճառյանի մտերիմներից էր:

9

1. Տաշյանը իր «Հայաստան հայերեն արձանագրություն մը» հոդվածում («Հանդես ամսօրյա», 1906, մարտ) մեջ է բերել Ս. Գևորգ Էկեղեցու պատի վրա գրված արձանագրությունը:

10

1. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» (2 հատոր), առաջին հատորը լույս է տեսել 1940 թ., երկրորդը՝ 1951-ին, համալսարանի հրատարակությամբ:

2. Աճառյանի «Հնդհանուր լեզվաբանության ներածությունը» տպագրվել է նրա «Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների» աշխատության Ա հատորում, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1955 թ.:

3. «Զայնարանությունը» նույնպես տպագրվել է Աճառյանի «Հիակատար քերականություն հայոց լեզվի» Ա հատորում:

4. «Ստրաբոնի թարգմանությունը հունարեն-հայերեն» — տպագրվել է Ստրաբոն. «Օտար աղբյուրները հայերի մասին (հունական աղբյուրներ)» խորագրով, 1940 թ., Պետհրատ:

5. «Պատկեր հայ մատենագրության սկզբին մինչև ԺԸ դարը» անտիպ է:

6. «Հայարձան» (ժողովածու հայոց բոլոր արձանագրությունների, հնագույն շրջաններից մինչև 1550 թվականը), 1753 էջ: Այդ ժողովածուին աշխատակցել են Կարո Ղաֆադարյանը և ուրիշներ:

7. Աճառյանի կազմած «Պարսկական հատընտիրը» լույս տեսավ համալսարանի հրատարակությամբ (ապակետիպ), ապա 1937-ին՝ Պետհրատի կողմից:

ИЗ НЕОПУБЛИКОВАННЫХ ПИСЕМ РАЧЬИ АЧАРЯНА

А. А. АВЕТИСЯН

(Резюме)

Выдающийся лингвист, арменовед академик Рачья Ачарян (1876—1953) оставил богатое наследие, в котором значительное место занимают письма, адресованные известным арменоведам его времени. Часть писем Р. Ачаряна хранится в личных фондах Музея литературы и искусств им. Чаренца. Публикуемые письма, адресованные живущему в Нью-Йорке лингвисту и переводчику Мирдату Тириякяну, написаны в 1933 — 1937 гг.